



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Չբաղվածության օժանդակություն/Աշխատանք խթանող ծառայություններ՝ Title II –SSDI-ի ներքո

Մարտ 2016թ., Հրատ.՝ թիվ 5522.10 - Armenian

Ի՞նչ կկատարվի իմ SSDI նպաստների հետ, երբ ես աշխատեմ:

Սա Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության (SSDI, Social Security Disability Insurance) սպասառուների կողմից ամենահաճախ տրվող հարցերից մեկն է: Սոցիալական ապահովության վարչությունը (SSA, Social Security Administration) աշխատանքի օժանդակություն/աշխատանքի խթանման ծրագրեր է տրամադրում, որոնք կարող են օժանդակել Ձեր զբաղվածության որոնման ընթացքում:

Աշխատանքի այս օժանդակությունը/աշխատանքի խթանները կարող են օգնել Ձեզ՝ պահպանելու Ձեր SSDI նպաստները և Medicare ապահովագրությունը, երբ Դուք աշխատում եք: Հետևյալը աշխատանքի օժանդակությունների/աշխատանքի խթանման ծրագրերի քննարկումն է, որը մատչելի է SSDI-ի նպաստառուներին:

SSDI աշխատանքի օժանդակությունների/աշխատանքի խթանման ծրագրեր

Փորձնական աշխատանքի ժամանակաշրջան. Սոցիալական ապահովության մասին օրենքի (Օրենք) (Social Security Act, The Act) համաձայն՝ երբ Դուք SSDI եք ստանում և աշխատում եք, և առողջական վիճակի ապաքինումը ինդիք չէ, Դուք 9 ամսվա փորձնական աշխատանքի ժամանակաշրջանի (TWP, Trial Work Period) իրավունք ունեք: TWP-ն 9-ամսյա ժամանակաշրջան է, որը Ձեզ հնարավորություն է տալիս՝ ստուգել աշխատելու Ձեր ունակությունը: Պարտադիր չէ, որ այս 9 ամիսը հաջորդական լինի, բայց պետք է տեղի ունենա «սահող» 60 ամսվա ընթացքում: TWP-ի ընթացքում եկամուտը չի սահմանափակում Ձեր SSDI (20 Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք [CFR, Code of Federal Regulations] §404.1592):

Խիստ շահավետ գործունեություն. Խիստ շահավետ գործունեությունը (SGA, Substantial Gainful Activity) այն աշխատանքն է, որը Դուք կատարում եք՝ վճարման կամ շահույթի դիմաց, որը ներառում է մտավոր կամ ֆիզիկական զգալի աշխատանք (20 CFR §404.1572): SGA-ն առնչվում է և՛ այն աշխատավարձերին, որոնք Դուք վաստակում եք Ձեր աշխատանքից և՛ ինքնազբաղվածության եկամուտներին: 2016թ. SGA-ը կազմում է ամսական 1 130,00 ԱՄՆ դոլար՝ կույր չեղող անձանց համար, իսկ կույր անձանց համար՝ ամսական 1 820,00 ԱՄՆ դոլար: Այս գումարի չափերը Ձեր համախառն ամսական եկամուտներն են: Այսինքն, այն եկամուտը, որը Դուք վաստակում եք յուրաքանչյուր հարկից կամ այլ պահումներից առաջ, որոնք գանձվում են Ձեր վճարագրից:

SSA -ը ինքնազբաղվածության համար SGA-ը երկու ձևով է սահմանում.

1. Չուտ եկամուտներ ինքնազբաղվածությունից (NESE, Net Earnings from Self-Employment). NESE-ն տարեկան գումարի չափն է, որը Դուք վաստակում եք Ձեր բիզնեսից՝ ներքին եկամուտների ծառայության (IRS, Internal Revenue Service) թույլատրելի պահումներից հետո:
2. Ամսական աշխատած ժամերի քանակը. Դուք SGA եք կատարել, երբ ամսական 80 կամ ավել ժամ եք տրամադրել Ձեր բիզնեսին:

SGA-ի քանակն ինքնազբաղվածության համար կազմում է 1 130,00 ԱՄՆ դոլար՝ կույր չեղող անձի համար, իսկ կույր անձի համար՝ ամսական 1 820,00 ԱՄՆ դոլար:

*Փորձնական աշխատանքի ամիս (TWM, Trial Work Month). Ձեր 9-ամսյա փորձնական աշխատանքի ժամանակաշրջանը (TWP) որոշելու համար SSA-ն դիտարկում է այն գումարը , որը Դուք վաստակում եք յուրաքանչյուր ամիս՝ որոշելու, թե արդյոք TWP ամիս եք օգտագործել: 2016թ. որևէ ամսին, երբ վաստակել եք 810,00 ԱՄՆ դոլար կամ ավելի, Դուք օգտագործել եք TWP -ի 9-ամսյա ժամկետի 1 ամիսը:

SGA-ի և TWP-ի գումարի չափը կարող է ամեն տարի փոխվել: Ազգային սպառողական գների ինդեքսի (CPI-W, Consumer Price Index) աճը սովորաբար հանգեցնում է SGA-ի և TWP-ի համապատասխան աճի հաջորդող տարվա ընթացքում:

Իրավունակության երկարաձգված ժամանակաշրջան. TWP-ի ավարտվելուց հետո Դուք մտնում եք իրավունակության 36-ամսյա երկարաձգված ժամանակաշրջան (EPE, extended period of eligibility): Սա հաջորդական 36 ամսվա ժամանակաշրջան է, որի ընթացքում եկամուտները համեմատվում են SGA-ի մակարդակի հետ՝ որոշելու, թե արդյոք Դուք շարունակում եք իրավունք ունենալ SSDI վճարումներ ստանալու համար:

EPE-ի ընթացքում յուրաքանչյուր ամիս Ձեր համախառն կամ զուտ եկամուտը SGA-ին հավասար կամ դրանից ցածր են. Դուք իրավունք ունեք դեռ ստանալ Ձեր SSDI կանխիկ վճարումները: Եթե Ձեր համախառն կամ զուտ եկամուտները գերազանցեն SGA-ը, Դուք իրավունակ չեք լինի SSDI կանխիկ վճարումներ ստանալու (20 CFR §404.1592a): Այս ժամանակահատվածը նաև կոչվում է «վերասահմանման» ժամանակաշրջան:

Կասեցման ժամանակաշրջան. TWP-ի ավարտվելուց հետո առաջին ամսին, երբ Ձեր եկամուտները գերազանցեն SGA-ը, Դուք մուտք կգործեք «կասեցման» ամիս, որի ընթացքում նպաստների վճարումը կարող է դադարեցվել (20 CFR §404.316 & §404.325): Դուք կստանաք Ձեր SSDI վճարումը կասեցման ամսին և հաջորդ երկու ամիսը՝ կասեցման ամսից անմիջապես հետո: Այս եռամսյա

Ժամանակահատվածը նաև հայտնի է որպես «արտոնության ժամանակաշրջան», որից հետո նպաստների վճարումը կարող է դադարեցվել:

Վնասվածքին առնչվող աշխատանքային ծախս. Վնասվածքին առնչվող աշխատանքային ծախսը (IRWE, Impairment Related to Work Expense) այնպիսի ծախս է, որն առաջանում է Ձեր հաշմանդամության պատճառով՝ այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք Ձեզ հնարավորություն են տալիս աշխատել: Այս ծախսերը պետք է վճարվեն Ձեր կողմից և որևէ այլ մեկը դրանք չի կարող փոխհատուցել (Աշխատանքի օժանդակություններին վերաբերող ձեռնարկ [Redbook on Employment Supports])

Դրամական հատկացումներ. Դրամական հատկացումը Ձեր գործատուի կողմից ապրանքների կամ ծառայությունների համար կատարվող ծախս է, որը Ձեզ հնարավորություն է տալիս աշխատել և կատարել Ձեր աշխատանքային պարտականությունները (Աշխատանքի օժանդակություններին վերաբերող ձեռնարկ).

Հատուկ պայմաններ. Հատուկ պայմանն այն ծախսն է, որը վճարվում է երրորդ անձի կողմից՝ այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք հնարավորություն են տալիս Ձեզ աշխատել և/կամ կատարել Ձեր աշխատանքային պարտականությունները (Աշխատանքի օժանդակություններին վերաբերող ձեռնարկ [Making Employment Work for People with Disabilities]).

Անհատուց գործարարական ծախս. Պատասխանատվության չենթարկվող գործարարական ծախսն օժանդակություն է, որն անվճար տրվում է Ձեր բիզնեսի զարգացման համար: Ձեզ (բիզնեսի սեփականատիրոջը) տրված աջակցության ծախսը կրճատվում է՝ որոշելու, թե արդյոք Ձեր եկամուտները գերազանցում են SGA-ը (Ինքնազբաղվածության հնարավորություն հաշմանդամ անձնաց համար):

Չվճարված օգնություն. չվճարված օգնությունը անվճար աջակցություն է Ձեզ՝ բիզնեսի հաշմանդամ սեփականատիրոջը, ով SSDI է ստանում, որը ցանկացած այլ բիզնես կակնկալի գնել՝ որպես բիզնեսի/աշխատանքի ծախս: Ձեզ՝ բիզնեսի սեփականատիրոջը

տրված աջակցության աշխատանքին համարժեք ծախսը կրճատվում է զուտ եկամուտներից՝ որոշելու SGA-ն (հնրևագրավածության հնարավորությունն հաշմանդամ անձնաց համար):

Սոցիալական ապահովության կանոնակարգերի համաձայն՝ այդ ծախսերը (IRWE դրամական հատկացում, հատուկ պայմաններ, անհատույց բիզնես ծախս և չվճարված օգնություն) պետք է ի նկատի չառնվեն Ձեր ամսական հաշվելի եկամուտը (CI, countable income) հաշվարկելիս: Այնուհետև Ձեր հաշվելի եկամուտը պետք է համեմատվի SGAի հետ՝ որոշելու, թե արդյոք Դուք իրավունք ունեք շարունակել ստանալ SSDI կանխիկ վճարումները: Սա կոչվում է «SGA ստուգում»:

Medicare-ի շարունակական ապահովագրություն. «Աշխատանքի տոմսի և աշխատանքի խթանման բարելավման մասին» առ 1999թ. օրենքի (Ticket to Work and Work Incentive Improvement Act of 1999, The Ticket) համաձայն՝ Medicare ապահովագրությունը 39 ամսից երկարաձգվել է 93 ամսի:

Այս ժամանակահատվածի ընթացքում Դուք կշարունակեք պահպանել Ձեր Medicare Part A-ի (հոսպիտալացում), Medicare Part B-ի (այցելություն բժշկի) և Medicare Part D-ի (դեղատոմսով տրվող դեղեր) ապահովագրությունը: Medicare Part A-ն կշարունակի անվճար մնալ: Սակայն, Medicare Part B-ն և D-ն ընտրանքային են և ամսական ապահովավճար պետք է վճարվի՝ դրանք պահելու համար:

Medicaid գնման ծրագիր. «The Ticket» օրենսդրությունը նաև նահանգներին քաջալերում է «Medicaid գնման» (“Medicaid Buy-In”) ծրագրեր ստեղծել SSDI –ի այն նպաստառուների համար, ովքեր աշխատում են: Այս «գնման» ծրագիրը Ձեզ հնարավորություն է ընձեռում «MediCal» ապահովագրություն գնել՝ ամսական ապահովավճար գնելով: Նահանգային Medicaid «գնման» ծրագիրը, «250% Կալիֆորնիայի աշխատող հաշմանդամներ» (250% California Working Disabled [250% CWD]) ծրագիրն իրականացվել է 2001թ. ապրիլին:

Շտապ վերականգնում. «Աշխատանքի տոմս» ծրագրի Շտապ վերականգնման (EXR, expedited reinstatement) կանխատեսումը Ձեզ համար դյուրացնում է Ձեր նպաստների վերականգնումը: Եթե Ձեր եկամուտները SGA-ից ցածր են EPE-ն ավարտելուց հետո, Դուք

Էջ 6` -ից 6

կարող եք վերականգնել Ձեր նպաստները՝ առանց ստիպված լինելու կրկին դիմել Ձեր SSDI նպաստների համար:

Շտապ վերականգնման պայմանները Ձեզ թույլ են տալիս SSA-ին ծանուցել, որ այլևս չեք աշխատում SGA մակարդակում և Ձեր նպաստները վերականգնելու կարիք ունեք: Ձեր նպաստների վճարումը կարող է վերականգնվել երեքից վեց շաբաթվա ընթացքում:

SSA աշխատանքի օժանդակության/աշխատանքի խթանման ծրագրերի մասին հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել Սոցիալական ապահովության կայքէջ՝ www.socialsecurity.gov կամ ձեռք բերել SSA հրատարակության պատճենը, Աշխատանքի օժանդակությունների վերաբերող ձեռնարկը: Դուք նաև կարող եք դիմել SSA-ի (Area Work Incentive Coordinator for SSA) աշխատանքի խթանման շրջանային համակարգողին, աշխատանքի խթանման Ձեր տարածքային ծրագրավորման և աջակցության ծրագրին (Work Incentive Planning and Assistance project): Դուք նաև կարող եք դիմել Սոցիալական Ապահովության նպաստառուների պաշտպանության և շահերի պաշտպանության (PABSS, Protection and Advocacy for Beneficiaries of Social Security) ծրագրին՝ 800-776-5746 հեռախոսահամարով կամ այցելել «Disability Rights California»-ի կայքէջը՝ www.disabilityrightsca.org հասցեով:

SSA-ը վերանայել է հետևյալ հրատարակությունը՝ միայն տեխնիկական ճշգրտության նպատակով: Սակայն, սա պետք չէ համարել SSA-ի պաշտոնական փաստաթուղթ:

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.